ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Խոկումներ սևակյան պատկերասրահում

(խոհագրություն)

Ֆակուլտետ՝ *բանասիրական*

Կուրս՝ *մագիստրատուրա 2-րդ*

Ուսանողուհի՝ *Աննա Սարգսյան*

ԵՐԵՎԱՆ 2018

Խոկումներ սևակյան պատկերասրահում

> Սերն ինձ համար մեծ, լուրջ, հավիտենական բան է, անիկա միակ զգացումն է, որ մեզ կմոտեցնե աստվածներուն...
>
> **Ռուբեն Սևակ**

Բազմաթիվ խոսքի վարպետների ստեղծագործությունների գաղափարական առանցքը սերն է եղել՝ իր բազմազան դրսևորումներով, որի կերտումն ու մեկնաբանումը գրականության մեջ լույս աշխարհ է բերել նորանոր հեղինակային աստղաբույլեր: Երբ մարդկային հոգիներում սիրտ տանող ճանապարհին մշուշ է պատել բախտի անիվը, երբ սիրո պակասից սառչել են մարդկային զգայարանները, կամ, հակառակը, հախուռն զգացմունքները հարազատ հոգիներ են փնտրել՝ ինքնարտահայտման ծարավից դրդված, հայտնվել են վարպետ գրչով կերտված ստեղծագործությունները, որոնք ուղենշել են սրտի ճամփան՝ բացելով հուսադրող ապագայի գաղտնիքներ: Հայտնին ու անհայտը իր մեջ ձուլող սերը յուրահատուկ կերտվածք է ստացել Ռուբեն Սևակի վարպետ գրչի ներքո. նրա ստեղծագործությունն ուրույն նկարապատկեր է, որը ոչ միայն փոխանցում է իր ապրումը, այլև առարկայական կերպավորում է ստանում ընթերցողի գիտակցության մեջ: Հարկ է նշել, որ սևակյան բանաստեղծական աշխարհի պատկերասրահում մեծ սենյակ է հատկացված հայրենիքին, իսկ այդ նույն սենյակի պատերն արնաներկ են՝ իրենց ստեղծողի գրքի համազույն խորագրի օրինակով, հարակից սենյակում նրա սերն է՝ բնանկարչական երանգներով... այսպես՝ տարբեր ճյուղավորումներով, տող առ տող ծավալվում է սևակյան պատկերասրահը, որտեղ նախաստեղծ ու հեղինակի երևակայության միջոցով կեղավորում ստացած լուսավոր, և հուսաշունչ պատկերները ներկայանում են ընթերցողին՝ տանելով բազմաբովանդակ խոկումների ճանապարհով:

Ռուբեն Սևակն ունի կյանքի ընկալման յուրահատուկ փիլիսոփայական ըմբռնումներ. նրա ստեղծագործությունները հաջորդում են միմյանց, սնվում միմյանցով, իսկ բնության հետ բանաստեղծի կնքած անքակտելի դաշինքը օգնում է այդ նույն բնության մասնիկ հանդիսացող մարդ արարածի զգացմունքների

բացահայտմանն ու նոր ավիշով է սնում սնակյան խոսքը:

Բանաստեղծի ստեղծագործությունների առաջ քաշած հարցադրումներից ու բազմազան խնդիրներին տրված ինքնատիպ լուծումներից ակնառու է այն անսահման սերը, որը ոչ թե պատված է կուրության քողով, այլ ներկայանում է ճշմարտության լույսի ներքո: Նրա կենսագրության մարմնավորումներն են իր թողած չափածո, արձակ գործերը, որոնք անառարկելիորեն հավաստում են՝ մեր առջև կանգնած է հայրենասեր և ինքնամոռացությամբ իր շրջապատի լավ օրվան նվիրված անհատականություն: Բավական է կարդալ նրա «Հայու որբիկ» բանաստեղծությունը հասկանալու համար այն ճշմարտությունը, որ հեղինակը ոչ միայն իր ժողովրդի ցավերի զգայնաչափն է, այլ նաև ապագայի լուռ մարգարեն:

«Հայու որբիկ» բանաստեղծության մեջ տեսնում ենք հայի անտեր որբիկին, որն արյունոտ ոտքերով քաշկոտվել է մոլորուն, ում գյուղն այրել են, ընտանիքը՝ կորստյան մատնել, իսկ շրջապատի՝ սառնասիրտ, սերը դեպի մարդկայինը կորցրած մարդկանց համար չկա այլևս ո՛չ գութ, ո՛չ էլ հաց հայի ժառանգի համար: Անհերքելի է՝ դժվար է եղել հայի ճակատագիրը՝ լի ցավով ու անգութ հարվածներով, սակայն հարկ է նշել, որ իր հայրենիքի հանդեպ անսահման սիրով լցված, շրջապատի անտարբերությունից վիրավոր բանաստեղծը տվել է հայի փրկության բանաձևը.

Դե՛հ, զընա՛, մնծցիր ահեղ, որբն հայուն.
Մնի՛ր արյունով ու փսխե արյուն
Մարդկության ճակտին ու սարսափ ու հուր...
_Այդ՝ պարտքրս է տրխուր...[1]

Նման խոսքեր կարող էր ասել միայն այն բանաստեղծը, ով գիտեր «ինչո՞ւն», ով գիտեր, որ հայի համար միակ փրկությունը սեփական անցյալի «ահեղ» ժառանգը լինելն է, սակայն, միևնույն է, անգամ նման խոսքեր ասելիս Սնակի գրիչը չի թարցնում իր անսահման սերը համամարդկայինի մեջ. նա խոստովանում է, որ կռիվ տալն ու մարդկային արյուն թափելը հայի *տխուր* պարտքն է, բայց նաև անհերքելի է՝ հեղինակն իր ապրած ժամանակներում սեփական փորձով արդեն հասկացել էր այն ճշմարտությունը, որի մասին պետք է ահազանգեր «Զանգակնե՛ր, զանգակնե՛ր...» բանաստեղծության մեջ.

[1] Ռուբեն Սնակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ՝ 120:

Ու կիյնա այն, որ կը ծնկե ահով,

Չի թուրն ավելի արդար է Խաչեն,

Չի կյանքն անոնց է միայն, որ քաջ են,

Անոնց, որ կ'ապրին ուրիշի մահով...[2]

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ սևակյան խոսքերը մարգարեական հնչեղություն ունեն ոչ միայն ներկա ժամանակներում, այլ նաև գալիքի հորիզոններում, չէ՞ որ նրանք պատգամի պես ահազանգում են՝արդիական և սրտացավ հնչեղությամբ.

Ահա կ'իյնամ...Հայաստանը մա՛յր քեզի:

Կտակ կուտամ այս կոտրած սուրն երկսայրի՝

Ուր հայրիկիդ դեռ տաք արյունը կ'այրի...

Հայ գրողներից շատերին է հաջողվել հայի մեջ վառ պահել անցյալի փառքերն ու կորուստները, որոնց ճանաչումը կենսական է հայրենիքի լուսավոր ապագայի համար: Այդ հայրենասեր գրողների կողքին իր ուրույն տեղն ունի Ռուբեն Սևակը, քանզի նրա գրիչն -ինչքան սրտացավորեն և անկեղծորեն ինքնարտահայտվել է հայի ճակատագրի պատկերման ճանապարհներին, նույնքան ուժգնությամբ էլ պատկերել է իր սրտի գաղտնիքներն իրենց բազմազան հարցադրումներով ու ուրույն պատասխաններով:

Առանձնահատուկ կերտվածք ունի Ռուբեն Սևակի երգած պարզ, բայց ոչ պարզունակ սերը, որն իր իմաստային բարդության միջոցով շամբշային թավշությամբ ձգում է, վերհանում դեպի անրջային ոլորտներ, որտեղ նրա ընթերցողը հայտնվում է «խորհրդավոր անտառներու շուքին» տակ՝ մասնակցելու «գինով» հոգու սիրառատ խնջույքին՝ բոլորին հայտնի սիրո անհայտությամբ ներշնչված: «Գինով սեր» բանաստեղծության մեջ Սևակին հաջողվում է ոչ միայն իր անմնացորդ սերն արտահայտել իր սրտի տիրուհուն, այլ նաև թափանցիկ հյուլեներով կերտել տարաշխարհի իր չքնաղ ծաղկին, որը սիրող սրտի համար և՛ Հրաշք է, և՛ Երազ, և՛ Սեր...

Հավերժական ճշմարտություն է՝ ամեն վայրկյան չծնվող սերը դատապարտված է մահվան: Սևակն իր ստեղծագործության յուրաքանչյուր տողում

[2] Նույն տեղում, էջ՝ 107:

նորովի է կերտել իր երգած սերը. նորոգ սիրտը գնալով էլ ավելի է զգացել մեծացող սիրո ծարավը, ուստի պատահական չէ, որ սևակյան հոգին փափագել է սիրելիի թաց աչքերի քաղցր թույնի պակասը.

Թաց աչքերդ վրա՛ս հառե տրտմապես,
Անոնց թո՛ւյնը ներարկե ինձ մեղմորեն,
Որովհետև քու աչքերդ աղվոր են,
Խորհրդավոր անտառներուն շուքին պես.
Թաց աչքերդ վրա՛ս հառե տրտմապես:[3]

Ուրիշ է Սևակի երգած սերը, ուրիշ են նաև սևակյան գիշերը, որտեղ առավել ուժգնորեն է բարախում սիրո զարկերակը, որը մթապատ է, նրբիմաց և թրթռացող լռությամբ շաղախված. նշված հատկանիշների շնորհիվ այն պարուրվում է մեծարենցյան գիշերներին հատուկ անուշությամբ: Սևակը իր բանաստեղծական կտավին լուսանկարչական ճշգրտությամբ է պատկերել Լեման լճի սիրաշունչ միջավայրը. նրան հաջողվել է իրիկվա «հանդարտիկ» հովի միջոցով կերտել մայրամուտի բաղցրիկ շնչով պարուրված անսահմանություն, ուր մթում հնացող ծաղիկները, թռչնիկի նվաղուն երգը՝ հանդարտիկ հովի գրկում ապաստանած, նոր գույներ են տվել կյանքի՝ առօրյա մոխրագույնով ներկված պատկերներին և սևակյան ընթերցողը ստացել է բաց աչքերով երազելու գայթակղիչ հնարավորություն.

Երազներու դյութիչ բողին պես անուշ,
Ու սիրառատ սայվածքներու պես մթին
Երեկոյան կիջնե ստվերը քընքուշ,
Մե՛ղմ կիպի լեռան, ջուրին, մարմանդին,
Երազներու դյութիչ բողին պես անուշ ....
Կստվերոտվի չքնաղ լիճը Լեմանի:[4]

Հմուտ նկարչի պես նա պատկերել է իր երևակայությամբ ընկալված լճին, նա գրչով գծագրել է իր ստեղծագործության կապուտաչյա հերոսուհուն, որն ալիքվել է դառը ցավի կապանքներից վիրավոր.

Ա՜հ, վե՜ր մը ունիս կապույտ կուրծքիդ տակ թշվա՜ռ.
Խոսե՜, Լեման, ձա՜յն տուր ջուրիդ ալիքներեն:

---

[3] Նույն տեղում, էջ՝ 62:
[4] Նույն տեղում, էջ՝ 69:

Լեմա՛ն, Լեմա՛ն, պատմե ինձ սերդ լռիկ:[5]

Լճակի «ապշած» ալիքների հետ ընկերանալու փորձ է արել նաև Պերտոս Դուրյանը.

Մելամաղձոտ լըճակդ իմ,
Քեզ հետ ըլլա՛նք մըտերիմ,
Սիրեմ քեզի պես ես ալ
Գրավվիլ, լըռել ու խոկալ:[6]

Ե՛վ Դուրյանի, և՛ Սևակի բանաստեղծություններից ծորում է բնությանը փարվելու ցանկությունը, քանզի երկուսն էլ ունեն լռին խոկումներին տրվելու ուրույն կարողություններ: Մինչ Դուրյանը լճակին տալիս է հայելային պարզություն, որտեղ տեսնում է իր՝ լուսանկարչական ճշգրտությամբ արտացոլված հոգու պատկերը, Սևակն իր լճակին զարդարում է մայրամուտի բազմաբնույթ գույներով. նա նկարչի վրձնով պատկերում է այնպիսի միջավայր, ուր կապուտաչյա գեղեցկուհու լռությունը սկսում է պատմել իր մեջ հազարավոր հայացքների բացած գաղտնիքները: Ճիշտ է, ալիքները պատմել չգիտեն, բայց հեղինակի գրչի հետ նրանք կազմում են այն դյութիչ սիմֆոնիան, որի ներքո նորովի են թրթռում մարդկային սրտերի ամենանուրբ լարերը՝ սիրահար իրենց Ալպյանների անհասանելի ձյուներին...նրանք ձուլվում, նույնանում են նույնպիսի ցավից ալեկոծվող հոգիներին, լիճն աննկատելիորեն սկսում է անձնավորվել՝ լռության մեջ երկխոսել, հուզել...Հայտնվելով Սևակի վրձնով պատկերված Լեման լճի նկարի առջև՝ նրա ընթերցողը ակամա սկսում է մտորել, երազել, լսել սևակյան «անույշ» բառապատկերներում իրենց արցալումն ստացած տարաշխարհի հեռավոր, դյութող ձայները. հեղինակին հաջողվում է նորոգել մարդու և բնության միջև ի սկզբանե կնքված, սակայն տարիների ընթացքում ընկրկող դաշինքը: Ինչպես տեսնում ենք՝ Սևակը մարդու ներաշխարհի բացահայտման ճանապարհին հաճախակի է դիմում բնությանը: Նրա գրիչը «Հոգիս» բանաստեղծության մեջ ծառի մի մասնիկի՝ տերևի, այն է՝ կյանքի մի մասնիկի՝ հոգու բացահայտմանն է ընդառաջ գնում: Նման պատկեր կա նաև Համո Սահյանի «Տերևը» բանաստեղծության մեջ, որտեղ Սահյանը հարդագողը երազող տերևի ողբերգությունն է պատկերում.ցավալի է կողքից դիտել հույսերով լեցուն փարթամ

[5] Նույն տեղում, էջ՝ 70:
[6] Պետրոս Դուրյան, Ստեղծագործությունների ժողովածու, Եր., Էդիթ պրինտ, 2011, էջ՝ 4:

հոգու մի բուռ տերևի վերածվելը («Ձեռքդ բուռ արած ընկել ես հողին, Մի բուռ ձմեռ ես աղերսում, տերև»[7]), իսկ Սևակի մոտ այդ նույն տերևը պատկերված է խորը հուզականությամբ. Հեղինակը տերևի մեջ տեսնում է իրեն, ողջ էությամբ զգում նրա ցավն ու սարսռում նրա ամեն մի տարուբերումից. այստեղ տեսնում ենք արվեստագետի ու բնության ձուլման հստակ պատկեր.

Անժամանա՛կ թարշամած զարնան տերև մը է հոգիս...

Ծաղիկներուն մեջ կյանքին, զեփյուռին տակ մայիսի.

Ա՛լ ժպտալու անկարող, ան կդողա՛, կմսի՛...[8]

Խոսքն առավել տպավորիչ է դառնում հակադրության լույսի ներքո, ուստի հիվանդ տերևի պատկերումը կանաչ դաշտի մեջ «աղվոր» գարնանը, «բյուր գույներով» ծաղիկների «լռելյայն» ծիծաղի և գինով արևի ներքո ահազնացնում են տերևի հոգեկան անզորության ողբերգությունը. այստեղ պատկերված է կյանքի փոքրիկ, բայց շատ դիպուկ տեսարան. մարդը տանջվում է շրջապատի անտարբեր, գինովի, կույր նայվածքի տակ.

Բայց զարնանային կենսավետ այդ պարին մեջ մոլորուն՝

Հիվանդ տերև՛ մը տեսա, կանաչին մեջ դաշտերուն...[9]

Շրջապատին անտարբեր, ուրիշի ցավերին անհաղորդ բազմության մեջ հեղինակն առանձնանում է, իսկ նրան որպես փրկող առագաստ է մեկնվում բնությունը. այնտեղ բանաստեղծը տեսնում է իր հոգու արտացոլանքը և հենց դա է պատճառը, որ նա մարդկային կերտվածք է տալիս բնությանը, շնչում և ապրում բնությամբ՝ առավել հաստատուն հիմքերի վրա դնելով իր և բնության միջև կանխօրոք կնքված ամուր դաշինքը.

Սիրտը անհուն ցավով լի՝ ես ծռեցա սրգահար

Մատներուս մեջ առի զայն, ու իր մարմինը նիհար

Գուրգուրանքո՛վ, արցունքով մոտեցուցի շրթունքիս...[10]

Սևակի ստեղծագործության առանձնահատկություններից մեկն այն է, որ այն ոչ միայն հուսաղրել, այլ նաև երկխոսել գիտի: Գրքի գաղտնածածուկ էջերի խորքից լուռ զրուցում, միմյանց լրացնում են «Էտըլվեյս» և «Աղջկան հոգիներ»

---

[7] Համո Սահյան, Մայրամուտից առաջ, Եր., Հայպետհրատ, 1964, էջ՝ 70:
[8] Ռուբեն Սևակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ՝ 71:
[9] Նույն տեղում, էջ՝ 70:
[10] Նույն տեղում, էջ՝ 71:

բանաստեղծությունները: Անհերքելի է՝ հաճելի, զուրգուրող են բնության այն տեսարանները, որոնց միջավայրում իրականանում են մարդկային ամենափափագելի երազները,սակայն երբ այդ նույն երազները կորչում են և մարդը կորցնում է իր հարազատ հոգու կողքին լինելու հնարավորությունը, այդժամ հեքիաթային տեսարանը պատկերող ամեն մի մասնիկ խոր ցավ պատճառող հիշողություններ է առաջ բերում, հիշողություններ, որոնք ծաղրում են մահկանացուի անկարողությունը ճակատագրի հաճախ անողոք կարողության առջև: «Աղջկան հոգիներ» բանաստեղծության մեջ մենք հանդիպում ենք «Էտըլվեյսում» պատի վրա «անխոսուկ, մունջ» ծաղկեփնջին՝ հիվանդ կարոտից այրվող, որի հայտնվելու ճանապարհը գաղտնի է պահվում ընթերցողից.

Թառամե՛ր են թերթերդ բոլոր,

Հյուծեր է ցո՛ղը տրտմորեն.

Ո՞ր դժբաղդ հո՛վը սայլերեն

Քեզ հոս նետեց քայլամոլոր:[11]

«Աղջկան հոգիներ» բանաստեղծության մեջ հեղինակը կեսգիշերվա անշշուկ լռության մեջ նամակ է գրում իր սիրելիին, նամակում հիշատակվում են այն նույն Էտըլվեյսի ծաղիկները,գաղտնիքը բացվում է. նրանց քաղել էր ինքը «խե՛ղճ սիրուհիդ» «դժբախտ հո՛վի» հետ միասին...

Ու պատիս չար էտըլվայսներն ալ կարծես

«Խե՛ղճ սիրուհի»... կհանկերգեն ինձ տրտում,

Անո՛նք, զոր քեզ հետ քաղեցինք, մոռցա՞ծ ես... [12]

Շարունակում է հեղինակը խորիմաստ լռել գիշերային մթության մեջ՝ վառ պահելով կարոտի կանթեղը, որը երբեք չի աղոտվում խավարում.

Բաղդը մերժեց ինչ որ սիրտերն ուզեցին.

Դուն քու ճամբեդ քալե մինակ ու հլու.

Քենե հեռու, քենե անգետ առանձին,

Ես մի՛շտ հոս եմ, քե՛զ տենչալու, քե՛զ լալու...[13]

Պարույր Սևակը «Գիշերն ու ես» բանաստեղծության մեջ ասել է.

---

[11] Նույն տեղում, էջ՝72

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում, էջ՝73:

Գիշերն ունի ամեն բանի թույլտվություն:

Իսկ ես չունե՞մ...[14]

Ռուբեն Սևակը հավատում է, որ հնարավոր է խլել գիշերվանից ամեն բանի թույլտվությունը՝ հոգու երազների անհայտ թվացող ճանապարհը, նա ապացուցում է, որ գիշերվա մութ միջանցքներում հայացքը սիրո արահետին զամած և մենակությունից ծնված անքնությամբ տառապող մարդը հնարավորություն ունի գտնելու սիրելին տանող դղյակի ճանապարհը, որն անցնում է բնության գիրկը՝ «ակին բով» տանող կածանով.

Ու կփակվին արդեն աչքերս արցունքով.

Նախազգացում մը կըսե ինձ լիահույս.

«Պիտի գնես զայն այս գիշեր ակին բով».

Ու այն ատեն...ա՜հ այն ատեն... մինչև լո՜ւյս...[15]

Լի են սևակյան բանաստեղծությունները հույսերով, չէ՞ որ հենց դա է լուսավորում մարդու տառապանքը, ինչպես Միսաք Մեծարենցն է խոստովանել «Վերադարձի երգ» բանաստեղծության մեջ՝ անգամ վիրավոր սրտի մեջ բնակվող կսկիծն ու կյանքի հարվածներն անզոր են հույսի բերած դարմանի առջև.

Փուշեր նետուեցան օրէ օր վէրքիս,

Ու հոն հեծեծանք մը բերին հովեր.

Բայց սիրո հույս մը կ'արնե հոգիս:[16]

Սևակյան սիրերգության գոհարները ցույց են տալիս, թե հեղինակն ինչքան շատ է սիրում «ակին բով» պատկերել սիրային հուզառատ հոգեվիճակներ: Լևոն-Զավեն Սյուրմելյանն ասել է.«Հաջողված պատմությունը փոխանցված ապրումն է...»:[17] «Պատասխանը» բանաստեղծության մեջ ընթերցողին են փոխանցվում նրա սիրո պատմության ցավալի հետևանքները, ընթերցողն ինքը համակվում է սպասումով այն նամակի պատասխանին, որը գրված էր «վարանումո՜վ, հուզումո՜վ»: Այս ստեղծագործության մեջ սևակյան ընթերցողին է ներկայանում օրերի մութ միջանցքներում տրտում հայացքը սիրելիի պատասխանի ճամփին զամած մարդկային էությունը, ով, հիշելով իր գրած ամեն մի բառը, նախադասությունը,

---

[14] Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ 1, Բանաստեղծություններ, Եր., «Հայաստան» հրատ., 1972, էջ՝ 345:

[15] Ռուբեն Սևակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ՝ 73:

[16] Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, էջ՝ 47:

[17] Լևոն-Զավեն Սյուրմելյան, Արձակի տեխնիկա. Չափ և խենթություն, Երևան, «Գիտություն» հրատ., 2008, էջ 132:

հարություն է տալիս հանգչելու ճամփան բռնած սիրո կիզիչ հրդեհին, ինչն առավել տպավորիչ է դարձնում ապրումը.

Ասի թե ես զինո՛վն եմ իր նայվածքին,
Թե կախարդող իր աչքերուն մեջ ծավի՝
Հավետ սուզվի՛լ կ'ուզեի ես տրտմագին,
Շրթունքներըս իր համբույրի՛ն ծարավի...[18]

Հերոսը նախազգում է նամակի անպատասխան մնալու անխուսափելիությունը, բայց շարունակում է իրականության մեջ փարվել իր երազին, գնալ դեպի իր հույսը տանող անշարժ, դալուկ, հուսահատ ճանապարհով.

Կկարծեի թե հուզումեն պիտի լա՛ր
Ու նամակը պիտի տաներ շրթունքին,
Կկարծե՛ի.-այնքա՛ն գորով ու սեր կար
Իր հրաժեշտի համբույրի մեջ տխրագին:[19]

Ռուբեն Սևակն իր ստեղծագործության մեջ բերում է հոգեբանական նուրբ լուծումներ. նա ցույց է տալիս, որ մարդու ներսում կարող են գաղտնի գոյություն ունենալ այնպիսի մտքեր, որոնք հուզմունքի պահին կարող են հնազանդցնել իրենց տիրոջը: Ահազնացող սպասումը հասունացնում է սիրելիի հանդեպ տարակարծ զնահատականներ արտահայտելու անցանկալի անհրաժեշտությունը. ճառագայթներ որոնող լուսավոր հոգում իր թևերն է բացում մութ կանխազգացումը՝ խնդիր ունենալով նվաճել հիշատակված էակի հանդեպ տածած խորը վստահությունը.

Թերևս հեգնեց իմ հառաչնե՛րըս երկչոտ,
Որոնց ամբո՛ղջ հոգիս հանձնել կարծեցի.
Բառերուս վրա թերևս խնդա՛ց ան պչրոտ
Իր նենգամիտ աչքերովը կանացի...[20]

Պասկալն ասել է, որ տարակուսել Աստծու մասին, նշանակում է հավատալ նրան. բանաստեղծի պատկերած սերն այնքան մեծ է, որ անգամ կասկածի պահերին անհերքելի է անսասան հավատը թանկ էակի նկատմամբ: Ռուբեն Սևակն իր ստեղծագործությամբ գրաղացիայով զարգացնում է իր ներկայացրած ապրումների

[18] Ռուբեն Սևակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ 75:
[19] Նույն տեղում:
[20] Նույն տեղում:

ընթացքները. քայլ առ քայլ ընդլայնվում են հերոսի աշխարհընկալման ճանաչողության անծայրածիր սահմանները. նա արդեն հասկանում է, որ ինքն իր հույսին հետապնդում է, բայց չի հասնում, սպասված պատասխանը որոնում է, բայց չի գտնում. ի վերջո հեղինակի ապրումները, հոգու անհանգիստ խոկումները գալիս հանգչում են սիրելի հիշատակները վառ պահելու մտքին.

Ու մտածե՛լ բաժանումի իր հետին,
Ավա՜ղ, հետի՛ն համբույրի վրա սիրակեզ,
Երբ անկարող իշխելու ի՛նքն իր սրտին՝
Գլուխը կրծքիս՝ կհեծկլտա՛ր տըղու պես...[21]

Հեղինակը հասկանում է, որ պետք չէ խզել երազային հիշողությունների հետ այնքան թանկ կապը, ուստի նա վառ է պահում հին սիրով կերտված հուզապատ մանրանկարը, որն իր համար ոգեշնչող հույսերի աղբյուր է հանդիսանում: Կարդալով «Պատասխանը» բանաստեղծությունը՝ սնակյան ընթերցողը զգում է, որ վայելուչ է հեղինակի ապրած տառապանքը, որ «կնոջ սիրտը» հեղինակի համար շարքային բառակապակցություն չէ, այլ կանացի էության բացահայտման նուրբ փիլիսոփայություն՝ ուղղված կնոջ ներաշխարհի հուզական խորքերի բացահայտմանն ընդառաջ.

Ո՛վ կնոջ սիրտ, պաշտամունքով, արցունքով
Ու կեղծիքով հրաշակերտված սի՛րտ աղվոր,
Ուր կարկաչող սիրո չքնա՛ղ ակին քով՝
Մոռացության անդո՛ւնդը կա ահավոր...[22]

Բանաստեղծության տողատակում հայտնվում է Հովհաննես Թումանյանի «Ժպտուն աչքեր» ստեղծագործությունը: Ամենայն հայոց բանաստեղծը, բերելով «կորստյան անդունդի ծայրին» բուսնած ժպտուն աչքերի կործանարար վտանգը, ահազանգել է.

Դու մի՛ հավատա ժըպտուն աչքերին.
Շատ անգամ՝ նըրանք ծաղիկներ են վառ,
Բուսած կորըստյան անդունդի ծայրին,

[21] Նույն տեղում:
[22] Նույն տեղում:

Միամիտ մարդկանց քարշելու համար.[23]

Ռուբեն Սևակի պատկերած սերն ապացուցում է, որ մոռացության անդունդի եզրին գիտակցորեն կանգնելու համարձակությունն է իրական սիրո առհավտչյան, ուստի հեղինակը գիտակցաբար միշտ վառ է պահում իր անմնացորդ սիրո անաղարտ հիշատակը: Մեկ այլ բանաստեղծության մեջ («Պիտի սպասե՛մ...») բանաստեղծը հավաստիացնում է՝ հենց այդ հիշատակն է, որ օգնում է տարիներ շարունակ ապրել սպասման երազով. հուսալ այնքան սպասված նամակին և հանդիպմանը.

Երե՛ք տարի: Դեռ կ'սպասե՛մ ես իրեն:

Ահա տարտամ հորիզոններն հեռավոր,

Ահա ճամբան, որ կ'երկարի տրտմորեն,

Լռիկ ճամբան, որ զայն տարա՛վ մենավոր:[24]

Երկարատև սպասումը կարող է սպանել սիրո հիշատակի պատառիկներն անգամ, սակայն սևակյան սպասումները նորոգվում, նորովի են բոցավառվում հիշատակներից. քաղցր են Սևակի համար վերջին հրաժեշտի վայրկյանները, ուստի նա մեծ սիրով հիշում է «գյուղի վերջին տունը ցած», որի հետևի եղևնու ծառի կողքին ինքն իր հայացքով ուղեկցել է իր սրտի տիրուհուն.

Երկա՛ր, երկա՛ր ես մնացի քարացած

Ու իր մեկնի՛լը դիտեցի արցունքով...

Ռուբեն Սևակն իր ստեղծագործությամբ հավաստիացնում է, որ իր սիրո դեմ անկարող է անգամ վիրավոր սրտի այն չար ձայնը, որ տրտում գիշերներին հուշում է՝ «Ան չի պիտի գա»...: Ինչպես մութ սենյակում նստած մարդը, որ սպասում է աչքերի՝ մթության հետ հաշտություն կնքելուն, հեղինակը նույնպես սպասման անորոշ մթությանը համակերպվելով՝ մարտահրավեր է նետում ժամանակի անողոք ակնթարթներին.

Ա՛խ, կճանչնամ քու բողոքի ձայնը,

Վի՛շտ.- Սակայն իզո՛ւր, ա՛յս՝ իմ գիրքս նըսեմ.

Գնա՛ պատմել Տարիներուն, թե ես միշտ

---

[23] Հովի. Թումանյան, հ-I, Բանաստեղծություններ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ՝ 148:
[24] Ռուբեն Սևակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ՝ 76:

Պիտի սպասեմ, պիտի սպասեմ, սպասե՛մ....[25]

Ռուբեն Սևակի ըմբռնմամբ՝ իսկապես սիրող սիրտը համառորեն փարվում է սպասման «քաղցր» անդնդին, կառչում պայքարի անվերջ թվացող ուղուց: Լեոնարդո դա Վինչիի կարծիքով՝ այնտեղ, որտեղ մահանում է հույսը, ծնվում է դատարկությունը, ուստի պատահական չէ, որ գրողն իր ամեն մի տողով ցավին ու տառապանքին մարտահրավեր է նետում: Նրան հաջողվում է հմտորեն խույս տալ օտարության, լքվածության տևական, հոգին քայքայող մտքերից. նա վարպետորեն սկսում է կերտել իր սիրո փիլիսոփայության ապարանքը, ուր ամենամեծ սենյակը հատկացնում է Մեծն Սպասմանը: Սևակի սիրո բանաձևի առանձնահատկությունն այն է,*որ տենչանքի միջով անցած* իր սիրո համար բաց են հուսալի հետդարձի անգամ անիրական ճամփաները և նրա սիրտն անընդհատ երգում է իր հույսով ու լույսով սնված հավատի խոսքերը.

Հուսա լ, հուսա լ վերադարձի օրերուն...

....Ես կսպասեմ իրեն սիրույս իմ հրլու:[26]

Բանաստեղծի սիրո ընկալումների առանձնահատկություններից մեկն այն է, որ նա տունի հանձնվելու ցանկություն, նա սիրում է անգամ սպասումից ծնված ցավը, որն իր առավել հուզառատ պատկերումն է ստանում «Եկո՛ւր » բանաստեղծության մեջ: Այստեղ գիշերային խորունկ լռությունը պատում է նրա հոգին վհատությամբ, որից էլ ծնունդ է առնում հեղինակի ինքնամոռաց սևեռվածությունը տառապանքի կամուրջներին.

Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներեն անուրջիս.

Սրտիս ջահերն այրեցի բեզ ի հանդե՛ս.

Վերջի՛ն անցորդ տառապանքի կամուրջիս,

Երգի մը պես, բրոջ մը պես՝ մոր մը պես

Եկո՛ւր, եկո՛ւր, ճամբաներեն անուրջիս...[27]

Անսահման է հեղինակի սերն իր անմարմին երգերը մարմնավորող դիցուհու նկատմամբ, ուստի նա շարունակում է համառորեն խենթի պես սպասել նրան և հենց այս բանաստեղծության հետ են հատվում Թեքեյանի «Հաշվեհարդար»

[25] Նույն տեղում:
[26] Նույն տեղում:
[27] Նույն տեղում, էջ՝ 124:

ստեղծագործության հետևությունները.

Եվ այժմ, ո՛վ տեր, հակառակ իմ տանջանքիս , հակառակ

Ինձի համար սա չորացած երջանկության աղբյուրին,

Հին զինիով հորդաբուխ ես կարբենա՛մ տակավին...[28]

Սնակն արբենում ու արբեցնում է իր ապրած խորը սիրով. սիրո փառաբանման ճանապարհին «զինով» հոգին չի բացառում ցավն ու տառապանքը՝ նրա սիրո քնարը շարունակում է ճշմարտության այբուբենով կերտել սեր կոչվող զգացմունքն ամբողջապես բնութագրող բառեր, որոնք ձուլվելով կառուցում են անհերքելի խոհեր.

Ո՛վ չի սիրեր պիտի մեռնի առհավետ.

Սերը պե՛տքն է, երա՛զն է, կյա՛նքն է կյանիքն.

Սերը Մահվան մեջ Անուրջն է առհավետ.

Եկուր, եկուր , եկուր սիրենք կաթոգին:[29]

Ուշարժան է այն, որ սնակյան բանաստեղծություններն ունեն համառ բնավորություն, նրանք պատկերվում են անընկճելի անհատի փառաբանման ճանապարհով: Նույնքան համառությամբ և անխափան սիրով հեղինակը կապված է իր հայրենիքին, պատահական չէ, որ կիլիկյան ջարդերից հեղինակը լույս աշխարհ է հանել «Զանգակնե՛ր, զանգակնե՛ր...» բանաստեղծությունը: Անուրանալի է այն ճշմարտությունը, որ այստեղ զետեղված սնակյան խորը մտքերը արդիական են բոլոր ժամանակների համար, իսկ հասկանալու համար Ռուբեն Սնակի ստեղծագործության ազդեցիկությունն ու վերժամանակայնությունը, բավական է հիշել Եղիշե Չարենցի խորիմաստ խոսքերը.

Թե ուզում ես երգդ լսեն,

Ժամանակիդ շունչը դարձիր,

Կապվիր նյարդով յուրաքանչյուր

Քո օրերին ու քո դարին:[30]

Հարկ է նշել, որ Ռուբեն Սնակի մանրազնին զրողական հայացքը բացահայտել և ժամանակի դատին է հանձնել իր հայրենակիցների ցավի ու տառապանքի

---

[28] Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սնակ, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1981, էջ՝ 300:

[29] Ռուբեն Սնակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ՝ 125:

[30] Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., Երևանի համալս. հրատ., 1984, էջ՝ 373:

ակունքները.

Որովհետև դեռ հեռու է օրն այն,

Երբ գայլն ու գառնուկ սիրով արածին...

Թե ապրիլ կ'ուզե գառը նորածին

Պետք է իր ակռան սրե լռելյայն...[31]

Նրա խոսքերը վերժամանակյա հնչեղություն են ստանում իրենց պատկերման մեջ: Այստեղ տեսնում ենք մարգարե բանաստեղծին, ով իր գործով ու խոսքով վաստակել է «մեծերի» սխալները վիճարկելու հանձնառությունը, չէ՞ որ երբ ժողովուրդն ուղղորդողի կարիք ունի, նրա վստահությանն արժանացած մարդիկ իրավունք չունեն իրենց «բարձրից» չտեսնելու «երկյուղածորեն» մահ զտած որբերի, ծերերի և կանանց զոհաբերվելը: Հեղինակն այստեղ իր արդար բողոքն ուղղում է հլության քարոզով հավատը մեկնողների, եկեղեցու «խուլ զանգերի» դեմ: Եթե սիրո մեջ Ռուբեն Սևակը քարոզում էր հուզառատ սպասում, ապա հայրենիքի փրկության ճանապարհին սպասման «ելքերը» վաղուց արդեն իրենց անզորությունն ապացուցող փաստերով են ներկայացել նրան, ուստի այստեղ հեղինակը սպասման հույսերը փշրելու հանձնառությունն է ստանձնել բանզի.

Գույժ տվեք վաղվան զի հասկը մեռավ.

Գույժ տվեք հայուն, զի ազգը մեռավ.

Զանգակնե՛ր, ծերո՛ւկ, բարի՛ զանգակներ...[32]

Ռուբեն Սևակն ասել է.« Ինձ համար գրելը երգել է: Բոլոր մխիթարությունս սա երկաթի փոքրիկ գրչիս մեջն է: Ու մենավոր ապաստանիս մեջ՝ ձմրան գիշերներ, ինձմե երջանիկ մարդ չէ կարելի երևակայել՝ ոտանավորի մը ավարտումեն վերջ»: Մեծ մտավորականը զգացել է, որ իր ամեն մի տողով մաքառման հույս ու պայքարի հաստատակամություն է ներարկելու իր ընթերցողին: Նրա խոսքին հաջորդեց իր ազգայնանվեր, զոհաբերում պահանջող ճանապարհը, սակայն բնության հետ «քով-բովի» քայլող, ճշմարտության զանգերը հնչեցնող մտավորականը նաև գիտակցեց, որ իր ամեն մի քերթվածով կրթելու և ուղղորդելու է իր հարազատ ժողովրդին:

Ռուբեն Սևակի կյանքը մաքառման և խավար օրերին հույսի ջահեր վառելու, հայրենիքի համար անձնանվեր պայքարի ելնելու կոչ է: Ուշադրության է արժանի

[31] Ռուբեն Սևակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985, էջ՝ 107:
[32] Նույն տեղում:

այն հանգամանքը, որ սնակյան հայրենասիրական և սիրային երակ ունեցող ստեղծագործությունները կազմում են կուռ հակադրամիասնություն. միասին են իրենց նվիրվածությամբ, բնության հետ անմնացորդ ձուլումով, հախուռն կերտվածքով, սակայն հակադիր են «սպասում» կոչվող երևույթին տված պատասխաններով:

Սնակյան խոհերի առարկայացումներից անցել են տարիներ, սակայն նրա խոսքերը արդիական են անգամ գալիքի մարդու համար. երբ մարդիկ անտարբերությամբ են լցվում շրջապատի նկատմամբ, լռությունն ու ճիչերը դրվում նույն նժարին, այդժամ մարդու մեջ սկսում է խավարել հոգևոր տեսողության լույսը, իսկ դեպի լույսը տանող հետդարձի ճանապարհը Ռուբեն Սնակը վարպետորեն կառուցել է իր ամեն մի գրվածքում, որոնք կարդալով և որոնց շուրջ խորհելով՝ իրենց դերը «կյանք» կոչվող ներկայացման ժամանակ շարունակաբար տապալողները կզտնեն մարդու իրական հանձնառության գաղտնիքը բացող բանալին. կհասկանան, որ սեր տալով միայն կարող են վաստակել իրենց և շրջապատի բաժին երջանկությունը, իսկ այդ սերը պետք է տան և՛ իրենց ժողովրդին, և՛ ընտանիքին, և՛ սիրուն, և՛ կրկնակի՝ հայրենիքին:

Ինչպես տեսնում ենք՝ Ռուբեն Սնակ հասկանալու համար բավական չէ նրա ստեղծագործական պատկերասրահի մի սենյակում երկար մնալը, նույնաթեմա պատկերում ստացած ստեղծագործությունների տնական զննումը, քանզի բազմաշերտ գրողի խոհերը համապրելու համար անհրաժեշտ է դեզերել նրա ստեղծագործությունների գայթակղիչ հանգրվաններում, քանի որ նրանք, անկախ թեմատիկ ընդգրկվածության, լրացնում են միմյանց:

Գրականության մեջ շատ գրողներ են հավերժության շարունակական փնտրտուքների մեջ փորձել անմահացնել իրենց ստեղծածը. հաջողված արդյունքները պահպանել են իրենց գոյությունը դարեր շարունակ՝ արարիչներին պարգևելով երանության դափնիներ: Նույնպիսի դափնի կրելու իրավունքն է վաստակել Ռուբեն Սնակի գրիչը, չէ՞ որ նրա ինքնամոռաց սիրո հյուլեներով կերտված ստեղծագործական պատկերասրահը վերժամանակյա է... այնտեղ անհատի ներաշխարհն է, հայի անցյալը, ներկան ու ապագան...

Օգտագործված գրականության ցանկ

1. Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., Երևանի համալս. հրատ., 1984:
2. Լևոն-Զավեն Սյուրմելյան, Արձակի տեխնիկա. Չափ և խենթություն, Երևան, «Գիտություն» հրատ., 2008:
3. Համո Սահյան, Մայրամուտից առաջ, Եր., Հայպետհրատ, 1964:
4. Հովհ. Թումանյան, հ-I, Բանաստեղծություններ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988:
5. Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981:
6. Պարույր Սևակ, Երկերի ժողովածու, հ-I, Բանաստեղծություններ, Եր., «Հայաստան» հրատ., 1972:
7. Պետրոս Դուրյան, Ստեղծագործությունների ժողովածու, Եր., Էդիթ պրինտ, 2011:
8. Ռուբեն Որբերյան, Ռուբեն Սևակ, Վահան Թեքեյան, Մատթեոս Զարիֆյան, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1981:
9. Ռուբեն Սևակ, Երկեր, Եր., Սովետ. գրող, 1985:

1) Ռ. Սևակի գեղարվեստական հանրագիտակը բաղկացած է Թումանյանից, Սեհյանից, Դ. Սևակից, Դ. Դուրյանից, Ռ. Որբերյանից, Համո Սահյանից գրական կապերի վրայով:

2) Հեղինակաստեղծ է սիրելի և հարազատ, ապրելը ոգեշնչելու տեղիք բերելը գրելիք բաներ:

3) Գերյալ բնավորություն ունի:

4) Գրական մեծագույն ցնորք է: